

## ՍԱՐԿԱԲԱԳԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ ծեսը մեր հայրերու մեզի փոխանցած ժառանգն ու հաւատքն է: Եւ մեր պարտքն է՝ կանոնաւորութեամբ եւ բժախնդրութեամբ հոգ տանիլ եւ կատարել եկեղեցական արարողութիւնները:

Ծեսին պահպանման, շարունակութեան ու բժախնդիր կատարման մէջ, կուսակրօն եւ ամուսնացեալ քահանային չափ, նոյնքան պարտականութիւն եւ պարտաւորութիւն ունի Ս. Սեղանն եւ Աստուծոյ Տան մէջ ծառայող սարկաւազը, ուրարակիրն ու դպիրը:

Կանոնագրութեամբ ու հաւատքով կատարուած ծեսը՝ հոգեկան բաւարարութիւն ու հաւատք կը ներշնչէ հաւատացեալներուն: Իսկ կանոնաւորութիւնը յառաջ կու գայ եկեղեցական կարգերու եւ ծեսի իմացութենէն եւ կանոնաւոր գործադրումէն:

Ազգային Առաջնորդարանիս քրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի գրասենեակը, Թեմիս Առաջնորդ Սրբազան հօր տնօրինութեամբ եւ թելադրութեամբ, կազմակերպած է սարկաւազաց պատրաստութեան յատուկ դասընթացք մը: Մեծ Պահոց շրջանին դասընթացքները սկսած են, զանոնք կը վարէ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեան: Դասընթացքները տեղի կ'ունենան ամէն Երկուշաբթի երեկոները, ժամը 7-էն սկսեալ, Կլէնտէյի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Դասընթացքներուն մասնակցող թեկնածուները պիտի հետեւին ծիսական ու արարողական եւ հայոց տօնացոյցին առնչուած դասընթացքներու, որոնց աւարտին վկայուողները պիտի արժանանան սարկաւազական կարգի եւ աստիճանի:

## DEACONSHIP PREPARATION COURSES BEGIN

The rites and rituals of the Armenian Apostolic Church are sacred aspects of our church that have existed for centuries. It is our responsibility to ensure that these ceremonies take place in the proper manner and to keep our centuries old rituals alive.

A ritual conducted in the proper manner inspires faith in the parishioners and gives them spiritual fulfillment. Priests, both celibate and married, play a crucial role in this task, but so do the deacons, stole bearers, and acolytes who serve at the altar.

The Western Prelacy Christian Education Department, with the guidance of the Prelate, has organized lesson plans specifically for deacons. The lessons have already begun and are currently being taught by Very Rev. Fr. Barthev Gulumian. They take place every Monday at 7:00 p.m. at St. Mary's Church in Glendale. The candidates will follow a special program on the theme of rituals and services of the Armenian Church calendar, after successful completion of which they will have the designation of deacon.

